Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

374.7
Թ-31

ԹԱՒՐԻԶԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1899 — 1900 և 1900 — 1901

ՏԱՐԵՇՐՋԱՆՆԵՐԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

Թաւրիզ

1901

370
Զ355-Տ6

Տպարան Թաւրիզի Հայոց Աբրահամեան դպրոցի

374.7
Ռ-31
370
2355-ՏԵ
18 APR 2011
E - MAR 2010
Ս.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/XI 1922
ՄՈՍԿՎԱ MOSCOW

Պլատոնից դեռ շատ առաջ յոյն փիլիսոփայ Սոկրատէսը ասում կրկնում էր՝ «Ես միայն մի բան գիտեմ, դա այն է, որ չգիտեմ»։ Եւ այս խօսքերն ասում էր այն մարդը, որ իր ժամանակի առաջնակարգ փիլիսոփան էր, որին շարունակ դիմում էին այս կամ այն հարցի պատասխանը ստանալու համար, որը իր ժամանակի յառաջադիմական գաղափարների ներկայացուցիչ էր, ունէր իր աշակերտները և դպրոց էր ստեղծել։

Ինչն էր ստիպում այդ մարդին մի այդ տեսակ խոստովանութիւն անել։ Չէ որ նա իր ժամանակւայ Յունաստանի ամենաառաջնակարգ մարդկանցից մէկն էր, այն Յունաստանի, որի պետական, հասարակական կազմակերպութեան մի քանի ձևերին, գեղարուեստի և գրականութեան ստեղծանին քաղաքակիրթ աշխարհը վերջին դարերում է հասել միայն։ Դա այն Յունաստանի առաջնակարգ մարդկանցից էր, որի քաղաքակրթութիւնը եւրոպական այժմեան քաղաքակրթութեան նախադուռը հանդիսացաւ։ Ինչու ուրեմն այդ մարդը այդպիսի դառն խոստովանութիւն է անում։

Որովհետև նրա բոլոր գիտեցածը չգիտցածի հետ համեմատած մի հիւլէ էր միայն։

Եւ մի՞թէ նոյն բանը չպիտի ասի ներկայ մարդկութեան իւրաքանչիւր անդամը։ Եւ իրաւ. այժմեան քաղաքակիրթ մարդկութեան գիտեցածը ի՞նչ է այն հսկայական խնդիրների դիմաց, որոնք դեռ լուծւած չեն և զբաղեցնում են մարդկային ուղեղները։ Մենք չը գիտենք ինչ է անհունութիւնը կամ անսահմանութիւնը. ո՞րտեղ է այս տեսանելի սիեղերքի ծայրը։ Ինչ գիտենք մենք այն գնդի մասին, որի վերա ապրում ենք։ Ինչ գիտենք մենք այն գնդի ամենաառաջին բնակչի՝ մարդի, մասին։ Նոյն իսկ մարդի մարմինը ու-

1004
15837

նի այնպիսի մասեր, որոնց գոյութիւնը ոչնչով դեռ չէ կարելի լինում պատճառաբանել, բացատրել, որոնց դերը դեռ մեզ յայտնի չէ։ Դեռ ի՞նչ գիտենք մենք և ի՞նչ ենք արել ներկայ մարդկութեան մէջ գոյութիւն ունեցող ազազակող անարդարութիւնների համար։ Գիտե՞նք մենք այնպէս ապրել, որ ուրիշին ցաւ չը հասցնենք, նրա բնական իրաւունքների վրայ չը բռնանք, անխղճաբար այս կամ այն մարդին կամ ամբողջ ժողովրդներին չը ոչնչացնենք։ Դեռ ի՞նչ ենք արել մենք և միջոցներ գիտե՞նք երկրագնդիս վերա խաղաղութիւն հաստատելու համար, որպէսզի մարդիկ իրար չսպանեն ինչպէս գազաններ, իրար ունեցածը չը յափշտակեն, ինչպէս ամենացած անասուններ և չսորանան ինչպէս սողուններ։

Այս բոլորի մասին մենք կամ ոչինչ չը գիտենք, կամ շատ մութ ու խաւար, ենթադրական և թէական բաներ։

Այս բոլորը զբաղեցնում է այժմեան քաղաքակիրթ մարդկութեան ամենալուսաւոր ներկայացուցիչներին անդամ։ այս խնդիրի մասին իւրաքանչիւր նոր կարծիք զբաղեցնում է գիտնական Եւրոպացիներին անդամ։ Գիտենք գիտեն, որ դեռ ոչինչ չը գիտեն։

Այդպէս որքան առաւել ևս ոչինչ չը գիտենք մենք, հայերս, այն էլ Պարսկաստանում բնակւող հայերս. մենք, որ մնում ենք լուսաւոր մարդկութեան մեզ հասած ազատ ճառագայթներով միայն։ Մենք որ այստեղ հասարակ զբաղմունքից անդամ զուրկ ենք, որ լուսաւորութիւն ստանալու համար ունինք մի քանի ողորմելի դպրոց, իսկ մի քանի տեղերում նոյնիսկ դրանց թշնամիներ։ Մի ժողովուրդ, որ դեռ շրջապատող ազգերի մէջ համարւում է ամենայառաջադէմը և կրթուածը, որ նրանցից ոչինչ չէ կարող սովորել, իսկ ինքը լուսաւորութեան ճանապարհին գտնւող ազգերից շատ շատերից յետ է և նրանց հետ չափման մէջ չէ, դա մենք

ենք, Պարսկաստանի հայերս։

Ոչ ոք չի կարող պարծենալ, թէ նա ամէն բան գիտէ, սովորելու բան չունի. ինչ հասակի և սեռի էլ նա լինի.— մանուկ, դպրոցական, ուսանող, ուսուցանող, կին, աղջիկ, մեծ մարդ, զառամեալ ծերունի - միշտ բան կը գտնեն սովորելու։

Ահա այդ սովորելու պահանջին յագուրդ տալու համար Պարսկաստանի հայերը այն առաւելութիւնն են վայելում, որ բացի դպրոցներից կարող են ունենալ և այլ կրթական հաստատութիւններ։ Համեմատաբար հասուն մարդկանց համար այդ հաստատութիւններից մինն է **ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ**, որի դասախօսութիւններին կարող են յաճախել բոլոր սովորել ցանկացողները։ Այս ընկերութիւնը Թաւրիզում եղած ուժերի միջոցով դասախօսութիւններ է կազմում զանազան նիւթերից և համոզւած է, որ փոքր չափով նպաստում է ունկնդիրների մտաւոր պաշարի աւելանալուն և բարքերի մեղմանալուն ու ազնւանալուն։

Դու շատ ցանկալի էր, որ ունկնդիրների թւում լինէին աւելի շատ նրանք, որոնք աւելի ևս զուրկ են լուսաւորութիւնից։ Դա կանայք են, որոնք թէ դպրոցներում ստացած պակաս կրթութեան պատճառով, թէ ընտանեկան փակ կեանքի՝ և ուրիշ երկրների հետ շփումից զրկւած լինելու պատճառով, աւելի ևս կարիք պիտի ունենան դասախօսութիւններ լսելու և իրանց մտաւոր հորիզոնը ընդլայնելու՝ ներկայ հայ կնոջ մի կշռած - չափած քայլը իւր երեխայի դաստիարակութեան գործում, նրա մի խելք վարմունքը իր երեխայի պակասութիւններն ուղղելիս. այն բարերար ազդեցութիւնը, որ կինը ընդունակ է ունենալ ընտանիքի միւս անդամների վերա, այս բոլորը այնպիսի գործոններ են, որոնք ապագայի հայութեան համար անհետևանք չեն անցնելու։ Ուրեմն էլ ինչով պարսկաստանցի հայ կինը կարող է իր ազդեցութիւնը դէպի

բարին գործ դնել, եթէ ոչ իր մասաւոր կարգացումը աւելացնելով, դասատիրակութեան խնդրի հետ ծանօթանալով, որոնք նա կարող է ձեռք բերել, երբ կը կարդայ և կը յաճախի Լսարան, այսինքն կը սովորի:

Ուստի, Տիկիններ և Պարոններ, հրաւիրում ենք Ձեզ, որքան հնարաւոր է, յաճախ ներկայ լինէք դասախօսութիւններին և նրանցից ստացած օգուտները գործադրէք Ձեր ընտանիքներում և նպաստէք մեր թշւառ ժողովրդի առաջադիմութեանը:

Սովորենք, սովորենք և... սովորենք, համոզուած լինելով, որ դա մեզ կը տանի դէպի բարին:

Ալչութիւն 1900-1901. տարեշրջանի:

ԹԱՒՐԻԶԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ *1899 -- 1900 Տարեշրջանի*

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Արձանագրութիւն 1899 թ. Սեպ. 19 ընդհ. ժողովի.

1899 թվի սեպտեմբերի 19-ին Թաւրիզի Լսարանական ընկերութիւնը ունեցաւ իր ընդհանուր ժողովը (առաջին ժողովը չը կայացաւ անդամների թվի պակասութեան պատճառով, որ հրաւիրուած էր մի շաբաթ առաջ, սեպտեմ. 12-ին.): Ընդհանուր ժողովը ղեկավարելու համար ատենապետ ընտրուեց Դոկտ. Պարապետ Փաշայեանը: Պարդացուեց ընկերութեան անցեալ 1898-99 թվի գործունէութեան տեղեկագիրը: Այս ժողովը անցաւ ընթացիկ խնդիրների — Վարչութեան նոր անդամների ընտրութեան և այլն:

Ձայների մեծամասնութեամբ կայացան հետևեալ որոշումները՝

1. Ամարները կանոնաւորելու համար, քանի որ տարեկան ընդհանուր ժողովը լինում է սեպտեմբերին, անդամավճարներն էլ գանձուեն սեպտեմբերին:

2. Փոխել կանոնագրութեան 17-րդ յօդուածը, որ վարչութիւնը ինքը ընտրէ իր նախագահը և ոչ թէ նախագահ համարի վարչութեան անդամներից առաւելագոյն քուէ ստացողը:

3. Աւելացնել կանոնագրի մէջ մի կէտ՝ որ նախագահից զատ լինի և փոխ-նախագահ, որով 17 յօդուածը ձևակերպուում է այսպէս. «Վարչական ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրում է իր միջից նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ, քարտուղար և այլն:

4. Ընդունուեց և մտցուեց կանոնագրի մէջ, որ բացակայ անդամները կարող են իրենց քուէն յանձնել մի ուրիշի, եթէ միայն իրենց այդ համաձայնութիւնը կը յայտնեն պաշտօնա-

պէս վարչութեան ուղղած մի թղթում։ Իսկ այս անգամ այ համար, քանի որ նախատեսնուած չէր, ուրիշներին յանձնուած ձայները ընդունել։

5. Իւրաքանչիւր անդամ իւր ձայնով միասին երկու ձայն կարող է միայն ունենալ։

6. Ձայները չը բաժանելու համար, ով չէ ուզում ընտրուել, նախապէս թող յայտնի. որոշուեց կազմել ընտրելիների ցուցակ և նրանց միայն քուէ տալ։

7. Ձայների առաւելութեամբ վարչութեան անդամներ ընտրուեցին հետևեալները. 1. Մարտիրոս Յարութիւնեան 29 ձ. 2. Դօկտ. Ա. Փաշայեան 25 ձ. 3. Տիգ. Ռաշմաձեան 24 ձ. 4. Տիկ. Օրդանս Դաւթեան 19 ձ. 5. Ազիզ Մեհրաբեան 17 ձ. 6. Նազար էֆ. Գորոյեան 17 ձ. 7. Վահան Ռժշկեան 16 ձայն։

Ժողովը վերջացաւ երկու ժամ տևելուց յետոյ.

Նախագահ ընդհ. ժողովի՝ Մկրտիչ Ա. քհնյ. Տէր Ղազարեան
Քարտուղար „ „ Դօկտ. Ա. Փաշայեան

Գրագրապետ՝ Մարտիրոս Յարութիւնեան

Թաւրիզի Լսարանական Ընկերութեան վարչութեան միամեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը 1899-1900 թ.

1899 թուի, Սեպտեմբերի 19-ի ընդհանուր ժողովով ընտրուած նորընտիր լսարանական ընկերութեան վարչութիւնը՝ իր գործունէութիւնն սկսեց նոյն տարուայ սեպտեմբերի 24-ից: Այդ օրը վարչութիւնս առաջին նիստ գումարեց տեղիս Առաջնորդարանում՝ հրաւիրելով ձեռնհաս և կարող անձանց խորհրդակցելու և դասախօսութիւնների նիւթերը որոշելու համար: Ներկայ էին մօտ 20 հոգի, մեծ մասամբ ուսուցիչներ և վարժուհիներ:

Դասախօսութիւններ պէտք է տրուէին իւրաքանչիւր շաբաթ թաղէ-թաղ հերթով. ծրագրուած էր շատ աւելի թուով դասախօսութիւններ, քան թէ ներկայ տարում ընկերութիւնս կարողացաւ տալ. Մուհաղէմի ամսները և ներկայացումներն արգելք եղան. հնարաւոր եղաւ միայն 22 դասախօսութիւն կազմել զանազան նիւթերի վերաբերեալ: Ունկնդիրների թիւը միջին հաշուով եղել է 70-80, մեծ մասամբ տղամարդիկ: Իգական սեռը շատ քիչ է յաճախում դասախօսութիւններին:

Դասախօսողներ և նրանց դասախօսութիւնները.—

1) Դաղար էֆ. Դորոյեան՝ պարսկահայերի մասին.
2) „ „ պարս. մասին (շարուն. և վերջ)
3) Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ առաջին մանկութեան առողջապահութիւնը.
4) Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ երկրորդ մանկ. առողջ-թիւնը

5) Խաչիկ Սարգսեան՝ Աբեղեան Հայոց 60-ական թուականների կեանքից.
6) Սարգիս Ենգիբասեան՝ Մխիթարեան միաբանութիւնները.
7) Վահան Բժշկեան՝ Շնչառութիւն.
8) Նիկոլա տէր Յովհաննիսեան՝ Մեր երիտասարդ մայրերը.
9) Ս. Գ. Ուիլսըն՝ Բրիտանիոյ դերը և դիրքը քաղաքակրթութեան մէջ.
10) Մարտիրոս Յարութիւնեան՝ Ինտելիգենցիայի և ժողովրդի յարաբերութիւնը.
11) Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Հանճար և խելագարութիւն.
12) Տիգրան Ռաշմաճեան՝ Կեանք և Տիեզերք.
13) „ „ Կենք. և Տիեզ. (շար. և վերջ).
14) Վահան Բժշկեան՝ Բիմիական մի դաս, փորձերի վրայ հիմնուած.
15) Սարգիս Ենգիբասեան՝ Հայկական նախապաշարումներ.
16) Սիրաք Գրիգորեան՝ Յունաստան և Բուլղարիա.
17) Տիգրան Ռաշմաճեան՝ Հոգեբանութիւն փորձերի վրայ հիմնուած.
18) „ „ Հոգեբան. (շարունակութիւնը)
19) „ „ Հոգեբան. (շարունակ. և վերջ).
20) Դոկտ. Կ. Յ. Փաշայեան՝ Ընտանիների խելքը.
21) Դոկտ Ռայթ՝ Բիմիական տարրերի յարաբերութիւնը և միաւորութիւնը.
22) Վահան Բժշկեան՝ Տեղական աւելորդ սովորութիւններ և ծախքեր։

Նոր վարչութիւնը ներկայ տարում ունեցել է (4) ջոր վարչական նիստ, ուր խօսուել է զանազան խնդիրների մասին. իմիջի այլոց երկու թատերասրահներում էլ սեփական նստարաններ ունենալու խնդիրը այս տարի

և ս վերանորոգուեց. այս առթիւ Ղ՝ալայի թատերասրահը սքանչելի հարմար հանդանակութիւնը շարունակուեց, իսկ Լ՝իլաւայի թատերասրահի համար դիմեց Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութեանը. որը դեռ անցեալ տարի խոստացել էր իր ծախսով շինել տալ նստարանները և դնել Լ՝սարանիս տրամադրութեան տակ. սակայն այս անգամ բարեգործական ընկերութեան վարչութեան կողմից մերժողական պատասխան ստացուեց: Լ՝սարանիս վարչութիւնը ստիպուած եղաւ հանգանակութեան թղթին աւելի լայն ծաւալ տալ:

Ընկերութիւնս նաէր է ստացել հետևեալ հրատարակութիւնները՝

1) Խմբագրութեան կողմից (Լ՝օգօն) մի օրինակ «Նոր կեանք» կիսամեայ հանդէսը (շարունակուում ուղարկել).
2) Ն.Ժ. Սիմ. Շահնազարեանից, իր հեղինակութիւններից հետևեալ բրոշիւրը՝ ա. «Շ՝առ դպրոցին ներկայանալիս.»
բ. «Դպրոցի աշակերտներին (մի քանի խրատներ.)»
գ. «Երևանի Հայոց թեմական դպրոցը և հասարակ-ը:»

Դրամով նուէրներ՝ Աւետիս խան Սարգսեանից՝ 30 ղր.: պրն. Աբրահամ Աբրահամեանից 1 ղր. ընդամենը 31 ղրան:

Ընկերութեանս նիւթականը այս տարի մի փոքր լաւ վիճակի մէջ մնաւ, քան անցեալ տարին, ներկայ տարում ընկերութիւնս մուտք է ունեցել 668 ղրան-20 կոպ. մինչդեռ անցեալ տարի մուտք ընդամենը եղել է 452 ղր.: Իսկ ծախսել է ներկայ տարում 312 ղր. 60 կոպ. ուրեմն առ 1-ն Յունիսի մնում է 355 ղր. 60 կոպ.

Ահա ամբողջ տարեայ հաշուեկշիռը.—

ՀԱՇԻՎԵԿՇԻՌ

Թաւրիզի Լուսաւորական Ընկերութեան 1899 Սեպտ. 1-ից — 1900 Սեպտ. 1-ը.

ՄՈՒՏՔ

	դրամ	կոպ.
1) Առ 1-ն Սեպտեմ. 1899 նախկին Տարեանից . .	245	—
2) Անդամներից . .	360	—
3) Գանձանակից . .	32	20
4) Նուէրներ . . .	31	—
ընդամենը	668	20
ծախքը հանելով	312	60
Առ. 1-ն Յունիսի մնում	355	60

ԵԼՔ

	դրամ	կոպ.
1) Լուսաւորութ. և տաքացնելու	52	45
2) Սրահը պատ-ղներին և ցրիչին	54	50
3) Թուղթ և ծրար . .	29	25
4) Տպագրութեան . .	107	50
5) Վառարան, մոմակալ և զսպնկ.	50	35
6) Զանազան ծախքեր . .	18	55
	312	60

Ներկայ տարում ընկերութեանս անդամների թիւը եղել է 80.

Վարչութիւնս վերջացնելով իր գործունէութեան միամեայ շրջանը՝ պարտք է համարում իր շնորհակալութիւնը յայտնելու այն բոլոր անձանց, որոնք որևէ կերպ օգնութիւն են մատուցել ընկերութեանս առաջադիմութեան գործում՝ թէ դրամով, թէ գիրք կամ լրագիր ուղարկելով և թէ դասախօսութիւններ յանձն առնելով։

Նախագահ՝ Դոկտ. Կ. Յ. Փաշայեան

Քարտուղար՝ Արշակ Մեհրաբեան

ԹԱՒՐԻԶԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1900 -- 1901 Տարեշրջանի

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

Թաւրիզի Լուսաւորական Ընկերութեան 1900 թուի Սեպտեմբեր 29-ի ընդհանուր ժողովի.

1900 թուի սեպտեմբեր 29-ին տեղիս Առաջնորդարանում կայացաւ Թաւրիզի Լուսաւորական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը նախագահութեամբ տեղիս Առաջնորդ Գեր. Սահակ Եպիսկոպոս Այվատեանի: Ընդամենը ներկայ էին քսան երեք (23) հոգի: Առաջի ժողովը, որ ներկայ թաւականէս մի շաբաթ առաջ էր նշանակուած, չկայացաւ անդամների որոշեալ թուից պակաս լինելու պատճառաւ: Ներկայ ժողովս Կանոնագրութեան այդ կէտի յօրուածի համաձայն վաւերական համարուեց և սրբազան նախագահի հրամանով բացուեց: Ժողովի սկզբում նախ՝ կարդացուեց Լուսաւորական Ընկերութեան անցեալ 1899-1900 թուի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որ ներկայ ժողովի կողմից վաւերացուեց:

Յետոյ կարդացուեց նոյն ընտրութեան անցեալ 1899-1900 թուի տարեկան տեղեկագիրը, որ ժողովի կողմից ոտնկայս շնորհակալութեամբ ընդունուեց: Դրամական ծախքերի մէջ հինգ ղուանի տարբերութիւն կար, որ հաշիւը փակելուց յետոյ էր եղած. որոշուեց յետագայ գանձապահին յանձնել ծախքերի մէջ մտցնելու համար:

Այնուհետև ժողովս անցաւ վարչութեան նոր անդամներ ընտրելուն, նախորդ վարչութեան ժամանակը լրացած լինելուն պատճառաւ: Նախ քան քուէարկութիւն ըսկսելը, որպէսզի ձայները չը ցրուեն, որոշուեց, որ ընտրուել չը

ցանկացողները նախապէս յայտնեն։ Քէարկութիւնը գաղտնի էր։ Պէտք է ընտրէին 7 անդամ. ձայների առաւելութեամբ ընտրեցին միայն երեքը.

Պ. Վարդան Տէր-Օհանեան 18 ձայնով.
„ Մարտիրոս Յարութիւնեան 23 „
„ Ըրշակ Մեհրաբեան . 19 „

Վերստին քէարկութիւն եղաւ և այս անդամ պ. պ. Կարապետ Փաշայեան և Նազար Գ. Գորոյեան, որոնք նախորդ քէարկութեան ժամանակ ընտրելիների ցանկից հրաժարուած էին, ընտրեցին։ Այս անդամայ ընտրուածներն են՝

Պ. Կարապետ Փաշայեան 17 ձայնով
„ Միքայէլ Հառաջեան 16 „
„ Նազար Գորոյեան 15 „
„ Նիկոլա Տէր-Յովհաննիսեան 12 ձայնով։

Վարչութեան 7 անդամների թիւը լրացած լինելով՝ ժողովը փակուած համարուեց, որովհետև ուրիշ պարապմունք չունէր։

Նախագահ ընդհ. ժողովոյ՝
Սահակ Եպիսկ. Արքեպատականի թեմին
Առաջնորդ Հայոց

Քարտուղար ընդհ. ժողովոյ՝
Միքայէլ Հառաջեան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/II 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԱՒՐԻԶԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ

Ընկերութեան

վարչութեան 1900-1901 թ. միամեայ պաշտօնավարութեան

Տեղեկագիրը.

1900 թուի Սեպտեմբերի 29-ին տեղիս Առաջնորդարանում Ամրպատականի առաջնորդ Գեր. Սահակ Եպիսկ. Այվազեանի նախագահութեամբ տեղի ունեցաւ Լսարանական Ընկերութեան սովորական ընդհանուր ժողովը: Հին վարչութեան գործունէութեան ժամանակամիջոցը լրանալու պատճառով հրաժարական ներկայացրեց ընդհանուր ժողովին և ապա ձեռնարկեց նոր վարչութեան ընտրութիւնը:

Ընթերցողն անշուշտ կը հարցնէ. ի՞նչն է այդպէս ուշ սկսելու պատճառը, որ հաղիւ ընկերութիւնս ներկայ տարում իր առաջին դասախօսութիւնը տուց նոյեմբեր 14-ին. դրա պատճառը լսարանից դուրս հանգամանքների մէջ պէտք է որոնել:

Պատճառներից մէկը Վ. Եհափառ Շահի գալուստն էր Թաւրիզ. մարդիկ զբաղուած լինելով նրան ընդունելու պատրաստութիւններով հնարաւորութիւն չկար ժողով գումարելու. իսկ մի երկրորդ պատճառը՝ նախկին նախագահ Պ. Դօկտ. Փաշայեանի հրաժարականն էր: Ընկերութիւնս ըստ կանոնների մնացել էր առանց նախագահի. Պ. Դօկտ. Փաշայեանը թէև գրաւոր հրաժարական էր ուղարկել Գեր. Սահակ Եպիսկ. Այվազեանին. սակայն ժողովականները չընդունեցին նրա հրաժարականը՝ կրկին վերընտրեցին նրան և խնդրեցին պաշտօնի մէջ մնալ և չը հրաժարել:

Բայց որովհետև հրաժարականը հիմնուած էր լուրջ պատճառների վրայ, որ նա անչափ ծանրաբեռնուած լինելու

15834

պատճառով չի կարող իր ներկայութեամբը գոհացում տալ լսարանական ընկերութեանը. ուստի ընդունեց նրա կրկին հրաժարականը, և հոկտեմբեր 26-ին միայն մի առանձին նիստով հնարաւոր եղաւ նոր նախագահ ընտրելու։

Վարչութեան անդամութիւնից հրաժարուեցին նաև Պատար էֆ. Գորոյեան անձնական տկարութեան պատճառով և պ. Վարդան Տեր-Օհանեանը, որին և առաջարկուած էր գանձապահութեան պաշտօնը. վարչութիւնս ընդունեց Պատար էֆ. Գորոյեանի հրաժարականը, իսկ ինչ վերաբերում է պ. Վարդան Տեր-Օհանեանին, նրան ազատեց գանձապահութեան պաշտօնից. բայց միւս կողմից խնդրեց, որ նա մնայ վարչութեան անդամ և չը հրաժարի. պ. Վարդանը համաձայնուեց մնալ վարչութեան անդամ։

Վարչութիւնս ի նկատի ունենալով ժողովներ կազմելու դժուարութիւնը՝ աւելորդ բարդութիւնների մէջ չ ընկնելու համար և որ դլխաւորն է որպէսզի գործը կարողանայ օր առաջ իր կանոնաւոր ընթացքի մէջ մտնել, որովհետև առանց այն էլ բաւական ուշ էր, պաշտօնի կանչեցին վարչութեան պակաս անդամների տեղ՝ ընդհանուր ժողովում աւելի քան տասցող անձինք — Տիկին Աստղիկ Ռաշմաճեանը և պ. Սիրաք Գրիգորեանը.

Այսպէս վարչութիւնն իր կազմի մէջ մտնելով՝ ըսկսեց իր գործունէութիւնը Դեկտեմբեր 4-ից, երբ աւեց իր առաջի դասախօսութիւնը. թէև իհարկէ նախ.քան Դեկտեմբերի 4-ը դեռ հոկտեմբերի 17-ին և 23-ին վարչութիւնս իր դեռ ևս ոչ լրիւ անդամներով նիստեր է գումարել, հրաւիրել է ձեռնհաս անձանց խորհրդակցութեան և նրանց հետ միասին արդէն կազմել պատրաստել էր ամբողջ տարեայ դասախօսութիւնք նիւթերի ցանկը և որոշել էին արդէն դասախօսները։

Ներկայ տարում վարչութեանս համար հնարաւոր եղաւ տալ միայն 20 հրապարակական դասախօսութիւններ զանազան ինդիրներին նուիրած։ Թէև ծրագրուած էին շատ աւելի թուով դասախօսութիւններ, սակայն մասամբ ներկայացումները և մասամբ էլ Մուհարրէմի սուգերն են, որ իւրաքանչիւր տարի լսարանին արգելք են լինում կանոնաւոր կերպով շաբաթը մի դասախօսութիւն տալու հերթով Լիլաւայում և Ղազայում։

Կարծէք թէ լսարանական ընկերութիւնը քիչ-քիչ սկսում է իր դերի մէջ մտնել. այս տարի ունկնդիրների թիւի կողմից կարելի է ընկերութիւնս մխիթարական համարել. եթէ համեմատութեան մէջ դնելու լինինք նախկին տարիների հետ, շատ աւելի հետաքրքրութիւն ենք նկատում այս տարի։ Ունկնդիրների թիւը միջին հաշուով 120 կարելի է հաշուել երկու սեռից ևս։

Կարծես թէ Թաւրիզի հայ ժողովրդի մի մասի համար լսարանի դասախօսութիւնները արդէն պահանջ են դարձել. շատ անգամ երբ ընկերութիւնս ներկայացման կամ այլ պատճառով մի շաբաթ հերթից բաց է թողել դասախօսութիւնը, շարունակ տրտունջներ ենք լսել, թէ ինչո՞ւ այս շաբաթ դասախօսութիւն չեղաւ. „եթէ ներկայացումն է միայն պատճառը, ինչո՞ւ լի օրերից մէկում չէք դնում, որպէսզի դասախօսութիւնը չը կորչի և մենք հնարաւորութիւն ունենանք գալու և բան սովորելու“։ Ահա այս բոլորը գրաւական են, որ ստեղծուել է Թաւրիզի հասարակական շրջաններում հետաքրքրութիւն դէպի դասախօսութիւնները և նոյն իսկ շատերի համար շաբաթը մի անգամ դասախօսութիւն լսելը արդէն դարձել է պահանջ։

Ընդհանուր տեղեկագրի մէջ մատնանիշ է արուած այն հանդամանքը թէ, որովհետև շատ անգամ այնպիսի դասախօսու-

թիւններ են լինում, որոնք առանձնապէս նուիրուած են կանանց խնդրին, մանուկների դաստիարակութեանը, ուրեմն և օգտակարութիւն կարող են ունենալ ընդհանրապէս իգական սեռի համար (մայրերին և օրիորդներին). սակայն օրիորդներ և տիկիններըը ընդհանրապէս փայլում են իրանց բացակայութեամբ։ Բայց այս տարի նոյնը չենք կարող ասել. այս տարի կանանց և օրիորդների մէջ էլ հետաքրքրութիւն նկատուեց. ապացոյց դրան՝ ունէինք բաւական թուով յաճախորդներ, գոնէ տարուայ սկզբում։ Ուրախալի էր մեզ լսել երկու թաղերի բարեգործական ընկերութիւնների որոշումները այդ առիթով. թոյլ էր տուած իրենց խնամքին յանձնուած երկու Աշխատանոցի վարժուհիներին ամեն շաբաթ դասախօսութիւններին տանել իրանց սանուհիներին. նշանակում է նրանց կողմից նկատուել էր դասախօսութիւնների օգտակարութիւնը և անհրաժեշտութիւնը Աշխատանոցի աշակերտուհիների համար։

Սակայն մի երկու ամիս կանոնաւոր կերպով դասախօսութիւններին յաճախելուց յետոյ՝ վարչութեանս անյայտ պատճառով՝ դադարեցին դասախօսութիւններին յաճախելուց թէ երկու թաղերի վարժուհիները և թէ սանուհիները։

Յանկալի էր կանանցից և օրիորդներից գալիք տարիներում շատ աւելի թուով մարդիկ տեսնել դասախօսութիւնների ժամանակ։

Թէ կանանց մէջ իսկապէս հետաքրքրութիւն է առաջ եկել՝ իբրև փաստ կարող է ծառայել և հետևեալը, որ վերջին ժամանակներս կանանց մի փոքր շրջանում միտք էր յղացել դիմել վարչութեանս բացառապէս մայր և մօր կոչման համար դաստիարակող օրիորդների համար կազմակերպել դասախօսութիւններ, որոնք նուիրուած լինեն մասնաւորապէս դաստիարակչական գործին՝ թէ ինչպէս պէտք է երեխա-

յին կրթել բարոյապէս, ֆիզիքապէս և մտաւորապէս։

Վերջին նիստերից մէկում վարչութեանս զբաղմունքի նիւթ դարձաւ յիշեալ ցանկութիւնը և թէև ամեն դիւրութիւններ ունէինք կազմակերպելու յատկապէս կանանց համար դասախօսութիւններ, քանի որ պատրաստի դասախօսներ ունէինք և օրերն էլ որոշել էինք լի օրերից մէկում, երեկոները ժամը 5-ին գցել դասախօսութիւնները, որպէսզի մայրերը հնարաւորութիւն ունենան ներկայ գտնուելու, սակայն ներկայ վարչութիւնը անկարող եղաւ իկատար ածել շնորհիւ Թաւրիզում վերջի ժամանակներս առաջ եկած մի քանի արգելառիթ պատճառների, որոնք որոշ չափով զբաղեցրին վարչութեանս անդամներից շատերին։ Սակայն առաջարկն օգտակար է և տեղական պայմաններին նպատակայարմար. թող դալիք վարչութիւնները, ինչ գնով էլ լինի, աշխատեն իրագործել և անպատճառ բաւարարութիւն տալ այդ պահանջին. թող կանոնաւոր հիմքերի վրայ դրուեն յատկապէս կանանց համար տուելիք դասախօսութիւնները, որտեղ և կարող են ի հարկէ տղամարդիկ էլ ներկայ գտնուել, եթէ հետաքրքրուում են և այդ դասախօսութիւնները երբէք չը պէտք է խանգարեն լսարանական ընկերութեան միւս շաբաթական հերթական դասախօսութիւններին. նրանք իրենց կարգով, սրանք էլ լի օրերից մէկում։

Ներկայ տարուայ դասախօսութիւնների ընդհանուր բնաւորութիւնը, ինչպէս նիւթերի ցանկից կը նկատի ընթերցողը, մեծ մասամբ հասարակական է եղել և շատ մեծ չափերով նուիրած տեղական խնդիրներին։ Գիտական-ժողովրդական նիւթերին քիչ չափով կարողացաւ բաւարարութիւն տալ, այսպէս էլ ծրագրուած էր վարչութեանս դեռ առաջին նիստում, երբ հարց ծագեց դասախօսութիւնների նիւթերի մասին։

Նոր վարչութիւնը ունեցել է ինքը նիստ, որ քննել են մի քանի խնդիրներ և արել են որոշումներ: Էնց առաջին նիստը, որ վարչութեանս զբաղեցրեց՝ դա սեփական նստարաններ ունենալու խնդիրն էր: Ընդհանուր տեղեկագրից յայտնի է, որ հանգանակութիւն էր սկսած երկու թաղերի թատերասրահի համար՝ նստարաններ ունենալու առիթով: Լիլաւայի թատերասրահի համար յիշեալ թաղի կանանց բարեգործական ընկերութեան վարչութիւնը թէև խոստացել էր իր վրայ վերցնել նստարաններ ունենալու խնդիրը, սակայն մերժեց. իսկ Ղալայինը առակախ մնաց և հանգանակութիւնը շարունակւում էր: Վարչութիւնս նկատելով որ միայն հանգանակութեամբ բաւական տարիներ պէտք է քաշի, որ կարողանայ զլուխ բերել այդ խնդիրը, ուստի իր նիստերից մէկում որոշեց ինչպէս և իցէ այս տարի զլուխ բերել այդ և վճռեց այդ առիթով երկու թաղերումն էլ ներկայացումներ տալ, որից ստացւած արդիւնքը միացնելով հանդանակած գումարի հետ՝ պատրաստել տալ երկու թաղերի թատերասրահների համար նստարաններ:

Վարչութիւնս դեռ ևս իր վճիռը չերագործած Լիլաւայի նորակազմ թատերասիրաց ընկերութիւնն իր առաջին նպատակը դնելով նստարաններ ունենալու խնդիրը՝ արդէն ձեռնարկել էր ներկայացումների այդ նպատակով և շնորհիւ նրանց, արդէն Լիլաւայի թատերասրահը ունի այժմ սեփական նստարաններ:

Յիշեալ թատերասէրները իրանց մի զրութեամբ դիմեցին վարչութեանս, որով նպաստ էին խնդրում լսարանից նստարանների համար, քանի որ մենք ևս օգտւելու էինք այդ նստարաններից դասախօսութիւնների ժամանակ:

Վարչութիւնս իր 8-րդ նիստում ուրախութեամբ որոշեց տալ նրանց 20 (քսան թուման) թուման նպաստ, ո-

բովհետև վերջապէս կատարուած տեսաւ այդ չարաբաստիկ նստարանների խնդիրը, թէև միայն Լիլաւայում. նստարաններ, որոնք Լսարանի հիմնուելու օրից վարչութիւններին միշտ զբաղեցրել է իր ունենալու խնդրով։ Լսկ ինչ վերաբերում է Ղարայի թատերասրահի նստարաններին, այստեղ առայժմ չկան, և վարչութիւնս մի առանձին ձեռնարկութիւն չարաւ այդ առթիւ, որովհետև տեղեկացանք մեր մի անդամից, որ յիշեալ թաղի նորակազմ թատերասէրները նոյնպէս վճռել են սեփական նստարաններ ունենալ. թէև այս տարի չիրագործեցին, սակայն յոյս ունինք գալիք տարուանից նրանք էլ կ'իրագործեն և վերջապէս կազատուենք այդ նստարանների խնդրից. կ'ունենանք երկու թատերասրահներում սեփական նստարաններ։

Լիլաւայի թատերասէրներին 20 թուման նպաստ է տրուած այն պայմանով, որ ընկերութիւնս միշտ կարողանայ օգտուել այնտեղ դրուած նստարաններից։

Ղասախօսութիւններն աւելի հետաքրքիր և բազմակողմանի դարձնելու համար և որպէսզի դասախօս պր-ները հնարաւորութիւն ունենան իրանց դասախօսած նիւթը աւելի հասկանալի, աւելի լայն կողմերով շօշափելու և հասարակութեան տալու՝ վարչութիւնս որոշեց բերել տալ ժամանակակից զանազան խնդիրներին նուիրուած գրուածներ և դրա համար յատկացրեց 15 ռուբլի։ Արդէն բերել է տրուած 13 տեսակի գիրք, որոնք նուիրուած են հասարակական զանազան խնդիրներին։

Լսարանական նախկին ընդհանուր ժողովներից մէկում, որքան յիշում ենք, հարց էր ծագել ունենալ դասախօսութիւնների գոնէ համառօտութիւնը առանձին մատեանում. դրա օգտակարութիւնը արդէն հասկանալի է։ Այս տարի յիշեալ առաջարկը կարողացանք ի կատար ածել հե-

տեւեալ ձեւով. - Դասախօս պ.-ին արւում էր ընկերութեանս կնքով դրոշմւած մի կամ երկու թերթ՝ նայած նիւթին. այդ թերթի վրայ դասախօսից խնդրւում էր արձանագրել իր խօսած նիւթի համառօտութիւնը. բայց որպէսզի իմացւի թէ այս ինչ կամ այն ինչ դասախօսութեան ժամանակ ի՞նչ մտքերի շփումն է առաջ եկել ունկնդիրների մէջ. չէ՞ որ դասախօսութիւնը վերջանալուց յետոյ՝ նիւթը վիճաբանութեան է դրւում, թէ ի՞նչ տեսակ խնդիրներ են հեռաքրքրել ունկնդիրներին, ի՞նչ տեսակի կարծիքներ պաշտպանողներ են երեւացել վիճաբանութիւնների ժամանակ և վերջապէս ժողովի մեծամասնութիւնը ի՞նչ տեսակէտ է պաշտպանել և այն և այն, դրա համար իր նիստերից մէկում որոշեց վարչութեան անդամներից մէկին յանձնել դասախօսութիւնների ժամանակ եղած վիճաբանութիւնները արձանագրողի պաշտօնն, որը պէտք է համառօտ կերպով արձանագրէր եղած կարևոր վիճաբանութիւնները և եզրակացութիւնները: Արդէն ընկերութիւնս ունի 20 այդպիսի դասախօսութիւնների համառօտութիւններն իրանց վիճաբանութիւնների համառօտ արձանագրութիւններով, որոնք կազմւած են մի մատեանում և պահւում են ընկերութեանս դրծերի մէջ:

Ներկայ տարում վարչութիւնս երկու արտակարգ համախմբումներ է ունեցել. մէկը դրանցից XX-րդ դարի ասնելն էր, որը մասամբ և հանդիսի բնաւորութիւն էր կրում, իսկ միւսը Ռժ. Պողոս Դալստեանի դասախօսութիւնն էր, որ ընկել էր հերթից դուրս լի օրերից մէկում և դասախօսում էր „վենեբական ախտերի մասին“: Վարչութեանս կողմից կարգադրւած էր այդ օրը դասախօսութեանը ներկայ լինեն բացառապէս տղամարդիկ, որպէսզի վիճաբանութիւնների ժամանակ մարդիկ իրանց աւելի ազատ զգան:

1900 թւի վերջին դասախօսութիւնը, որ լինելու էր

դեկտեմբերի 30-ին և որովհետև դրանից յետոյ եղած դասախօսութիւն կը հաշուէր արդէն նոր տարուայ մէջ, որով վերջանում էր և 19-րդ դարը. ուստի որոշեցինք այդ 19-րդ դարի վերջին երեկոյթին մի փոքր արտակարգ բնաւորութիւն տալ, որպէս XX-րդ դարի շէմք: Խօսուեցին երկու դասախօսութիւններ. ա) „19-րդ դարը դիտութեան տեսակէտից“ և բ) „19-րդ դարի Էվոլիւցիան Հայկական կեանքում“. կարդացուեցին Գամառ Գրաթիպայից ոտանաւորներ: Մէջ ընդ մէջ հանդիսի ընթացքում երգում էր Լիլաւայի դպրոցների քառաձայն երգեցիկ խումբը:

Լսարանական ընկերութեան դասախօսութիւններից մէկում վիճաբանութիւնների ժամանակ հարց ծագեց ժողովականների մէջ. թէ արդեօք լսարանի դասախօսութիւնների արծարծած խնդիրները որպէսզի ապարդիւն չանցնեն՝ աւելի լաւ չէ՞ր լինի եղած որոշումները և կամ օգտակար առաջարկները, որոնք կապ կունենան տեղական այս կամ այն հիմնարկութեան հետ, իրաւունք տալ Լսարանական ընկերութեան վարչութեանը այս կամ այն ձևով քննադատուած հիմնարկութիւններին հասցնելու: Երկու ժողովում շարունակ այս խնդիրն էր ծեծւում և վերջապէս որոշուեց տալ իրաւունք ընկերութեան — որևէ դասախօսութիւն, որ տեղական կարիքներ է շօշափում և նրա՝ աւելի լայն շրջանի մէջ տարածումը եթէ կարող է օգտակար լինել տեղիս հասարակութեանը՝ տպագրութեան տալ և բրօշիւրների ձևով տարածել ժողովրդի մէջ:

Առաջարկը պէտք է լինի ժողովական — ունկնդիրների կողմից, իսկ եթէ վարչութիւնը յարմար դտաւ առաջարկուած նիւթը անմիջապէս կը տպագրի և կը ցրի հասարակութեանը:

Առաջինք բերում դասախօսների և նրանց խօսած

Նիւթերի ցանկը. —

1. Պ. Վահան Թամզարեան — Ամիրիկայի ժողովրդների մասին.
2. „ Տիգրան Ռաշմաճեան — Բարոյագիտու թիւնից.
3. „ „ „ Բարոյագ. (շարունակ.)
4. „ Լուսանդ Ֆրանդեան — Նրեխաների բնաւորութիւնը.
5. „ Միքայէլ Օշանեան — Գիտնին. մարդու կեանքից.
6. „ Դոկտ. Կ. Փաշայեան — XIX Դարը գիտութեան տեսակէտից.
7. „ Մարտ. Յարութիւնեան „ Դարի Էվոլիւցիան Հայկական կեանքում.
8. „ Սիրաք Գրիգորեան — Ֆրանս. մեծ յեղափոխութեան պատճառները.
9. „ Մարտ. Յարութիւնեան — Քրիստոնեական խնդիր.
10. „ Գրիգոր Աղաջանեան — Պատերազմ թէ խաղ-թիւն.
11. „ Աբրպեա — Պալեածատ. Աբրպակնում. և հարկերը.
12. „ Միրզա Մելիք Սայեադեան — Աբրպատակ. գաւառացի հայերը և նրանց կրթական վիճակը.
13. „ Յովսէփ Պարախանեան — Ժողովրդի կրթական դրոծը Եւրոպայում.
14. „ Դոկտ. Ռայթ — Էվոլիւցիան Ս. գրքի համեմատ.
15. „ Ռժ. Պօղոս Դալատեան — Վենեբական ախտեր.
16. Մրսաբը Ուիլսըն — Կրօնի և գիտութեան յարաբ. Ընդլս Սաքս. ցեղերի մէջ.
17. „ Երրհմ. Մ. Ջհանեան — Ընտ. դասախօսակութիւնը.
18. „ Սաղաթել Դասապարեան — Գրքերի մասին.
19. „ Երշակ Մեհրաբեան — Ամուսնական խնդրի դիմաց.
20. „ Վահան Ռժշկեան — Մաղնիսականութեան մասին.

Ընկերութեանս նիւթականը այս տարի բաւական մխիթա-

բական դրութիւն է ունեցել։ Նախկին տարեանից կանխիկ մնալ հասաւ 355 ղր. 60 կոպ։ Այս տարի այդ գումարի վրայ աւելացրինք անդամավճարներից 570 ղր., նստարանների համար հանձնաված գումարից՝ 40 ղր. Եւ էր Պրն. Արտաշէս Նալբանդեանից 20 ղր. ընդամենը՝ 630 ղրան. Նախկինի հետ միասին ուրեմն ընկերութիւնս այս տարի մուտք է ունեցել՝ 985 — 60 իսկ սրա դիմաց ծախսել է 695 ղր. 60 կոպ., որը հանելով ընդհանուր մուտք 985 ղր. 60 կոպէկից կանխիկ ընկերութեանս դանձարանում մնում է 290 ղրան.

ՀԱՇՎԵԿՇԻՌ

Թաւրիզի Լուսաւորական Ընկերութեան 1900—1901.

ՄՈՒՏՔ	ղրան	կոպ.	ԵԼՔ	ղրան	կոպ.
1) Նախկին Գանձապահից .	355	60	1) Անցեալ տարւայ հաշւին ծախք	5	—
2) Անդամավճարներից . .	570	—	2) Սրհների. տաքաց. լուս. և ծառ.	100	10
3) Նստարանների համար հանդաձակածներից . .	—	—	3) Գնած գրքեր . .	67	5
	40	—	4) Ցրիչին . . .	27	50
4) Նւէր Պ. Արտաշ. Նալբանդեանից	20	—	5) Նամակների . .	3	60
			6) Տպարանական . .	36	25
			7) Կալմարարին . .	58	50
ընդամենը	985	60	8) Մանր (մեխ, կնիքի ներկ) .	2	60
			9) Լիլ. թատերասէրներին նպաստ.	200	—
			10) Տեղեկագրի տպագրութեան	195	—
Կանխիկ մնում	290	—	ընդամենը	695	60

Ներկայ տարեշրջանի ընթացքում լսարանը ունեցել է հարիւր և մէկ անդամ երկու սեռից և.ս. որոնցից 94 անդամը արդէն վճարել են իրանց անդամավճարները, իսկ մնացած 7 հոգին իրանց տարեկան վճարները պէտք է տան Մարտ ամսում:

Վարչութիւնս իր հրաժարականը տալով՝ պարտք է համարում հրապարակով շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր մարդկանց, որոնք որևէ օգնութիւն են մատուցել ընկերութեանս առաջադիմութեան գործում թէ դրամով, թէ գիրք կամ լրագիր ուղարկելով և թէ դասախօսութիւններ յաճն առնելով:

Նախագահ Վարչ-ութեան Մարտ. Յարութիւնեան

Վարչ-ութեան անդամներ

Տիկ. Աստղիկ Ռաշմաճեան (գանձ.)
պ. պ. Վարդան Տէր Օհանեան
„ Միքայէլ Օտառաֆեան (քար.)
„ Ղազար Մեհրաբեան (քար.)
„ Ն. Տ. Յովհաննիսեան (փ. ն.)
„ Սիրաք Գրիգորեան

Հ.Ս.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

53.5.22